Բարձր Հայքը եւ առահասարակ Հայկական Միջնաշխարհը մի զգալի չափով թափուր էին դարձել իրենց բնիկ տարրից ու հեծում էին մահմեդական լուծի տակ, ահա այդ ժամանակ՝ Հիւսիսային Հայաստանում եւ յատկապէս Տաշիրքում եւ ի մասնաւորի Հաղբատ ու Սանահին մտաւորական կենդրոններում, վառ էր պահւում հայ հոգին եւ հայ սիրտը, հայ ազգային դիմագիծը:

Յայտնի է պատմութիւնից, թէ ինչպէս այդ ժամանակները նոյն այդ մշակութային կենդրոններում հաստատուած հայ ուսումնականները, «արեւելեան հայոց» այդ մտաւորական ներկայացուցիչները յաճախակի իրենց գրութիւններով յանուն կիլիկեան կամ «արեւմտեան հայոց» (այս արտայայտութիւնները այն ժամանակից են գալիս) զգաստութեան եւ շրջահայեցութեան էին հրաւիրում, զգուշացնում էին նրանց, չլինի՞ թէ ընկնեն լատինների լարած որոգայթների մէջ, հրաժարուին նախնեաց աւանդութիւններից եւ սեփական դիմագծից, դիւրաւ կուր դառնան մարդորսների:

Յայտնի է արդէն, որ շատ վաղուց, դեռ այն դարերից են սկսել Եւրոպայից եկած հոգեւոր եւ աշխարհական մարդորսները «առատ հունձք» որոնել հայ իրականութեան մէջ: Եթէ չլինէր «արեւելեան հայոց» ուժգին հակազդեցութիւնը այն ժամանակ, թերեւս շատ բան այլ կերպ տեղի ունենար: Եթէ չլինէին մեր միջնադարի մշակութային այդ կենդրոնները, թերեւս մեր անցեալից եկող պատմական եւ գիտական մի շարք աշխատութիւններ ժառանգութիւն մնացած չլինէին մեզ: Եթէ, վերջապէս, չլինէին նոյն այդ մենաստանները իրենց «գրիչներով», այսինքն՝ ձեռագիրներ արտագրող եւ նկարազարդող քրոնիկեան աշխատաւորներով ու արուեստագէտներով, անշուշտ շատ բան կորցրած պիտի լինէր հայ մշակոյթի պատմութիւնը: (Սայաթ-Նովան եւս վերջը վանական դարձաւ այնտեղ):

Վերջապէս, Հաղբատ եւ Սանահին վանքերը իրենց պարիսպներից ներս դեռ մինչեւ այսօր էլ պահում եւ պահպանում են շիրիմները հայ միջնադարի մի շարք ականաւոր գործիչների — զամբարանները այս եւ այն թագաւորի ու իշխանի, հոգեւորականի եւ ուսումնականի: Սանահինից վար, Զորագետի վրայ, մինչեւ օրս էլ կանգուն է մնում վանքի պատմական կամուրջը, ծանօթ՝ «Աւաղ կամուրջ» անունով, որ դեռ 13-րդ դարում չինել է տուել Լոռիի Կորիկեան Աբաս Բ. թագաւորի կին եւ Զաքարէ ու Իվանէ սպասալարների քոյր Նանան:

Հաղբատ եւ Սանահին վանքերը — Լոռիում կան նաեւ ուրիշները,— որոնք իրարուց ընդամէնը հինգ քիլոմետր հեռաւորութեան վրայ են գտնւում եւ այսօր էլ կանգուն են ու գրեթէ անվթար, հանդիսանում են մի-մի հոյակապ կոթող հայ ճարտարապետութեան: Այդ տեսակէտից՝ Հաղբատ գերազանցում է կից դարաւանդի վրայ բազմած Սանահնին: Նրանց երկուսի դիմացը, ոչ շատ հեռու, գտնւում է պատմական Օձուն (այժմ՝ Ուղունլար) գիւղը, հայրենի աւանը Յովհան Օձնեցի կամ Իմաստասէր կաթողիկոսի, որ միջնադարի հայ մատենագրութեան եւ իմաստասիրական գիտութեան ամենէն փայլուն ներկայացուցիչներից մէկն էր: Նոյն այդ գիւղում է գտնւում ու մինչեւ օրս էլ կանգուն է Օձնեցիի անունը կրող մի հոյակապ եկեղեցի,— մէկը հայ ճարտարապետութեան կոթողներից, որոնցով այնչափ հարուստ է Լոռին, պատմական Տաշիրքը:

Բայց Լոռին հանդիսացել է ժամանակին որպէս կենդրոն ոչ միայն հայ մշակոյթի, ընդարձակ առումով, այլ եւ՝ մէկ կենդրոնը ժամանակի հայ քաղաքական կազմակերպութեան, մէկ աւանդապահը հայ պետականութեան գաղափարի: Տաշիրքում էր հիմնուել մեր պատմութեան մէջ ծանօթ տեղական թագաւորութիւններից (Աբծրունեաց, Վանանդի եւայլն) մէկը, այսպէս կոչուած Կորիկեան թագաւորութիւնը:

Այժմեան Ստեփանաւան (Զալալ-Օղլի) գիւղաքաղաքից ընդամէնը հինգ քիլոմետրի վրայ գտնւում Բերդ գիւղը — (Լոռի բերդը), մի դարաւանդի վրայ: Ներկայիս այդ անուանի գիւղը յայտնի բերդաքաղաք է եղած անցեալում: Բերդը այժմ էլ կայ, միայն թէ կիսաւեր վիճակի մէջ: Շատ անառիկ տեղ է չինուած երեք կողմից շրջապատուած է խոր ձո-